ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Hraparak.am կայքի 2021թ. մարտի 12-ի «Հազար զոհ՝ այս կողմ, հազար՝ այն կողմ» վերնագրով նյութի կապակցությամբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նազելի Բաղդասարյանի դիմումի վերաբերյալ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նազելի Բաղդասարյանը՝ 2021թ. մարտի 12-ին Hraparak.am կայքում հրապարակված «Հազար զոհ՝ այս կողմ, հազար՝ այն կողմ» վերնագրով նյութի կապակցությամբ (հեղինակ կայքում նշված չէ):

Ըստ դիմումի հեղինակի՝ նյութի վերնագիրը չի արտացոլում իր հնչեցրած միտքը, սակայն տարածվել է իր լուսանկարով՝ դրանով իսկ թիրախավորելով իրեն:

Այսպիսով, դիմումատուն ԴՄ-ից ակնկալում է իրականացնել աշխատակարգով սահմանված գործողություններ:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. Hraparak.am կայքը 2021թ. մարտի 12-ին հրապարակել է «Հազար զոհ՝ այս կողմ, հազար՝ այն կողմ» վերնագրով նյութը, Hraparak.am-ը, վերոնշյալ հոդվածի վերնագրի տակ տեղադրել է Ն. Բաղդասարյանի լուսանկարը, այնուհետև անդրադարձել ՀՀ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Նազելի Բաղդասարյանի հայտարարությանը, թե ներքաղաքական լարված իրավիճակը խոչընդոտում է Ադրբեջանում պահվող հայ գերիների վերադարձին:

2. 2021թ. մարտի 12-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն ստացել է ՀՀ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Նազելի Բաղդասարյանի դիմումը, որում վերջինս գրում է, որ նյութի վերնագիրը որևէ կերպ չի արտացոլում իր հնչեցրած միտքը, սակայն տարածվելով իր լուսանկարով՝ դրանով իսկ թիրախավորել է իրեն։ Դիմումատուն հայտնում է նաև, որ կայքի խմբագրի հետ պարզաբանող զրույց ունենալուց հետո հրապարակման մեջ ավելացվել է փոխվարչապետի նկարը, «սակայն դրանից խնդրի էությունը չի փոխվել»։

3. Հրապարակումից հասկացվում է, որ նյութի հեղինակը նաև զրույց է ունեցել պատգամավորի հետ, որի ժամանակ Ն. Բաղդասարյանը հայտնել է, որ այդ արտահայտությամբ ինքը նկատի է ունեցել առհասարակ ներքաղաքական լարված վիճակը։ Այս անուղղակի մեջբերումից հետո նյութի հեղինակը եզրակացնում է՝ «իհարկե, դժվար թե իշխանական պատգամավորն այդ լարվածության թիվ մեկ պատասխանատու համարեր հենց իրենց իշխանությանն ու վարչապետին»։

4. 2021թ. մարտի 24-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը նամակով դիմեց Hraparak.am կայքի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանին՝ ստանալու վերջինիս մեկնաբանությունները տվյալ դիմումի կապակցությամբ, ինչպես նաև՝ լրացուցիչ տեղեկություններ, եթե կան այդպիսիք։ Գլխավոր խմբագիրը ներկայացրեց իր մոտեցումը, որ ԴՄ-ն իրավասություն չունի քննելու օրաթերթի հետ կապված դիմումները և առաջարկեց, որ բողոքողը դիմի դատարան կամ՝ անձամբ իրենց։ Սակայն 60-ից ավելի լրատվամիջոցների վստահությունը վայելող, իր առաքելությունը Հայաստանի մեդիա դաշտում մասնագիտական էթիկայի սկզբունքները արմատավորելը համարող Դիտորդ մարմինը գտնում է, որ լիովին իրավասու է քաղաքացիների պատշաճ դիմում/բողոքների հիման վրա հանրությանը ներկայացնել տարբեր հրապարակումների վերաբերյալ իր փորձագիտական դիրքորոշումը՝ հիմնվելով կարծիքներ տարածելու ազատության սկզբունքի վրա։

5. 2021թ. մարտի 24-31-ը ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն անցկացրեց բողոքի առցանց քննարկումներ։

Բ. ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք

Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները

2. Սույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Սույն օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

9. Եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հղում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվական գործունեություն իրականացնողը:

II. **Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր**

1.4. վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա,

1.5. ձգտել, որ հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, վերնագրերը բխեն նյութի բովանդակությունից, չչարաշահվեն հանրային դեմքերի և սովորական մարդկանց անձնական տվյալների համընկնումները, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

քննարկելով

Hraparak.am կայքի 2021թ. մարտի 12-ի «Հազար զոհ՝ այս կողմ, հազար՝ այն կողմ» վերնագրով նյութի կապակցությամբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նազելի Բաղդասարյանի դիմումը,

ի գիտություն ընդունելով, որ

հրապարակման վերնագրում բացակայում են չակերտները, որով պարզ է դառնում, որ վերնագրում հայտնված միտքը չի վերագրվում պատգամավորին՝ որպես ուղիղ մեջբերում նրա հայտարարությունից կամ լրատվամիջոցին տված հարցազրույցից,

ընդունելով հանդերձ, որ

լրատվամիջոցը հանրային և պետական գործիչների հրապարակային հայտարարությունների հիման վրա կարող է կատարել սեփական վերլուծությունները և եզրահանգումները, ինչպես նաև կիրառել լրագրողական հնարք, այն է՝ նախապես իրենց ունեցած գաղափարին ծառայեցնել հրապարակային հայտարարությունները և անմիջականորեն հարցազրույցի միջոցով ձեռք բերված տեղեկությունները,

ինչպես նաև այն, որ լրատվամիջոցը բարձրաձայնել է թերևս ամենահրատապ հանրային թեմաներից մեկը, որի կապակցությամբ առկա են դժգոհություններ կառավարության և իշխող կուսակցության ձեռնարկած քայլերից, և այս կապակցությամբ նրանց հայտնած իրարից տարբերվող թվերն անգամ հիմք են տալիս կատարելու չափազանցված եզրակացություններ և թեմայի մասին հրապարակումներին դնելու այսպիսի վերնագրեր,

համարելով, որ

հեղինակի ստորագրության բացակայության պարագայում հոդվածի պատասխանատուն խմբագրությունն է,

արձանագրում է.

1. 2021թ. մարտի 12-ի «Հազար զոհ՝ այս կողմ, հազար՝ այն կողմ» վերնագրով նյութի մեջ Hraparak.am-ը տվյալ վերնագրի և պատգամավորի լուսանկարի համադրումն օգտագործել է միտումնավոր՝ ոչ միայն հրապարակումը առավել գրավիչ և սադրող դարձնելու, այլ նաև իր կատարած եզրակացությունը առանց դրա համար հիմքեր ունենալու լսարանի մոտ իշխանության կոնկրետ ներկայացուցչին վերագրելու կամ վերջինիս հետ ասոսացնելու համար, այսպիսով մանիպուլացնելով վերնագիրը առանց չակերտների, սակայն լուսանկարի համադրությամբ օգտագործելու հնարքը և դրանով անձնական վիրավորանք հասցրել Ն. Բաղդասարյանին։

2. Նյութի հեղինակը (տվյալ դեպքում Hraparak.am-ի խմբագրությունը) չի նշում, թե հարցազրույցի ընթացքում, օգտվելով անմիջական շփման հնարավորությունից, Ն. Բաղդասարյանին հարց ուղղե՞լ է այն մասին, թե ինչ են անում իշխանությունը և պատգամավորն անձամբ՝ լուսաբանվող խնդրի առնչությամբ: Խմբագրությունն ակնհայտորեն անտեսել է այն փաստը, որ տվյալ պատգամավորն անձամբ մի քանի անգամ հրապարակայնորեն հանդես է եկել հայ գերիների խնդրով իր գործունեության մասին տեղեկություններով և հաշվետվությամբ, ինչպես նաև մամուլում և ԱԺ կայքում հրապարակվել են նման տեղեկություններ: Փոխարենը հրապարակումը պարունակում է հետևյալ տեքստը. «մինչ իշխանական պատգամավորները զբաղված են իրենց վատ աշխատանքի հարցում մեղավորներ փնտրելով, թե ում պատճառով է, որ գերիների վերադարձը չի հաջողվում, այդ նույն ընդդիմության ներկայացուցիչների ջանքերով նաև՝ Հայաստան գերիներ են վերադարձվում»: Այսպիսով, կիրառված լրագրողական հնարքը չի ծառայեցվել հանրային շահին՝ այն է ձեռք բերել և տարածել հավաստի տեղեկություն և մեկնաբանությունները կատարել դրանց հիման վրա:

ՔԱՆԻ ՈՐ Hraparak.am-ը ինքնակարգավորման նախաձեռնության անդամ չէ և պարտավոր չէ հրապարակել սույն փորձագիտական կարծիքը, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հորդորում է բողոքի հեղինակին՝ օգտվել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ պատասխանի իր իրավունքից, ինչպես նաև նկատի ունենալով կայքի խմբագրի վերը նշված առաջարկությունը՝ դիմել խմբագրություն: ԴՄ-ն լրատվամիջոցին կոչ է անում հրապարակել այն:

Ընդունվել է 2021թ. մարտի 31-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 62-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007թ. մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015թ. մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: